ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

1958 թ. ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց ինքնուրույն արևելագիտական կենտրոն, որը կոչվեց «ՀՀ ԳԱ արևելագիտության սեկտոր»: Այդ կենտրոնի ստեղծումը շրջադարձային փուլ էր հայ արևելագիտության զարգացման մեջ, քանի որ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ էր բացվում արևելագիտական ակադեմիական կենտրոն: Արևելագիտության սեկտորի վարիչ նշանակվեց ճանաչված պատմաբան, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: Մեկ տարի անց նրան փոխարինեց Հովհաննես Ինճիկյանը՝ մոսկովյան կրթություն ստացած կուսակցական գործիչը և պատմաբանը:

Արևելագիտության ինստիտուտի պատմության «սեկտորի շրջափուլը»իր ուրույն տեղն է զբաղեցնում Հայաստանում արևելագիտության կայացման գործում: Հիմք դրվեց մի շարք ուղղությունների հետազոտմանը, ստեղծվեցին աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրում էին Թուրքիայի, Իրանի, արաբական երկրների, քրդերի պատմության և մշակույթի հարցերը, հավաքագրվեց մասնագիտական հատկություններով օժտված համախոհների համերաշխ աշխատակազմ, ներգրավվեցին երիտասարդ մասնագետներ, սկսվեց համալրվել բազմալեզու արևելագիտական գրադարանը:

Այդ տարիներին սկիզբ է առնում ակադեմիական արևելագիտության հայկական դպրոցը, որը ձեռք է բերում մեծ հեղինակություն: Մերձավոր և Միջին Արևելքը, նրա ժողովուրդների և երկրների պատմությունը, քաղաքականությունը, մշակույթն ընտրվում են որպես հետազոտությունների հիմնական ուղղություններ: Սեկտորի առաջատար աշխատակիցները սկսում են ակտիվորեն մասնակցել միջազգային և համամիութենական գիտաժողովների, հրապարակումներով հանդես են գալիս արտերկրի հեղինակավոր գիտական պարբերականներում: Նրանք չեն վարանում ծանրակշիռ հակահարված տալ պատմության թուրք կեղծարարներին, արևելյան սկզբնաղբյուրների հրատարակումով վերահաստատել մեր ժողովրդի պատմական իրավունքները:

Իր գոյության արդեն երրորդ տարում սեկտորը տպագրեց առաջին արևելագիտական պարբերական հրատարակությունը Հայաստանում՝ «Արևելագիտական ժողովածուն»: Հետագայում այն վերանվանվեց «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» և այսօր էլ շարունակում է տպագրվել: Այդ ժողովածուում հոդվածներով հանդես են եկել հայ արևելագետների մի քանի սերունդ և շատերի համար այն ճանապարհ է հարթել դեպի գիտական ճանաչում և հեղինակություն:

Սեկտորի հաջողությունները մեծապես պայմանավորված էին նրա երկարամյա վարիչի՝ Հովհ. Ինճիկյանի անհատական հատկություններով: Լինելով հմուտ կազմակերպիչ և օժտված լինելով հանգիստ ու բարյացակամ բնավորությամբ՝ նա սեկտորում ստեղծել էր մի այնպիսի աշխատանքային մթնոլորտ, որը նպաստեց համերաշխ գիտական կոլեկտիվի կայացմանը: Նրա շուրջը ձևավորվեց հզոր գիտական ներուժ ունեցող առաջատար գիտաշխատողների կորիզ: Նրանցից էին թուրքագետներ՝ Արամ Սաֆրաստյանը, Երվանդ Սարգսյանը, Ռուբեն Սահակյանը, Ռաֆֆի Կոնդակչյանը և Ռիմա Դանիելյանը, արաբագետներ՝ Նիկոլայ Հովհաննիսյանը և Հովհաննես Թոփուզյանը, իրանագետներ՝ Համլետ Եգանյանը, Բորիս Բալայանը և Վահան Բայբուրդյանը, քրդագետներ՝ Հաջիե Ջնդին, Գուրգեն Ակոպովը, Շաքրո Մհոյանը և գիտության անխոնջ մի շարք այլ մշակներ:

Հաշվի առնելով սեկտորի արձանագրած հաջողությունները և ելնելով Հայաստանում արևելագիտական հետազոտությունների հետագա զարգացման և ընդլայման անհրաժեշտությունից՝ ՀՍՍՀ Մինիստրների Սովետը 1971 թ. հունիսի 24-ին որոշում ընդունեց Գիտությունների ակադեմիայում սեկտորի հենքի վրա Արևելագիտության ինստիտուտ հիմնելու մասին: Կառավարության այդ որոշման համաձայն՝ ԳԱ նախագահությունը 1971 թ. հուլիսի 28-ին ընդունեց համապատասխան որոշում: Նորաստեղծ ինստիտուտի տնօրենի պաշտոնում Ակադեմիայի նախագահության ընտրությունը կանգ առավ պատմական գիտությունների դոկտոր, Հին աշխարհի պատմության գծով փայլուն մասնագետ Գագիկ Սարգսյանի թեկնածության վրա: Այդպիսով՝ նա դարձավ Արևելագիտության ինստիտուտի առաջին տնօրենը: Հովհ. Ինճիկյանը շարունակեց պաշտոնավարել ինստիտուտում որպես տնօրենի գիտական գծով տեղակալ:

Ինստիտուտի ստեղծումն ազդարարեց, որ Հայաստանում արևելագիտական հետազոտությունների պատմությունը թևակոխում է մի նոր փուլ: Սեկտորի տարիներին ձևավորված հետազոտական խմբերը վերակազմավորվեցին բաժինների, որոնց ղեկավարներ նշանակվեցին արդեն գիտական մեծ հեղինակություն ձեռք բերած մասնագետներ՝ Ե. Ղազարյանը՝ Թուրքիայի բաժնի վարիչ, Հ. Եգանյանը՝ Իրանի բաժնի վարիչ, Ն. Հովհաննիսյանը՝ արաբական երկրների բաժնի վարիչ, Հ. Ջնդին՝ քրդագիտության բաժնի վարիչ: Շատ չանցած՝ ինստիտուտի բաժինները սկսեցին հանդես գալ որպես երկրում արևելագիտության համապատասխան ուղղության ոլորտում հետազոտական աշխատանքը կազմակերպող ու համակարգող կարևոր օղակներ: Հետագայում, վերևում հիշատակված բաժինների վարիչների պաշտոններում նշանակվեցին համապատասխանաբար՝ Ռ. Սահակյանը, ապա Ռ. Սաֆրաստյանը, Շ. Կարամանուկյանը, Լ. Հարությունյանը, Վ. Բայբուրդյանը, Խ. Չատոևը, Շ. Մհոյանը, ապա Մ. Խամոյանը:

Տարիների ընթացքում Արևելագիտության ինստիտուտի հետազոտությունների շրջանակն ընդլայնվեց, աշխատակազմը համալրվեց, գիտական կյանքը դարձավ ավելի հագեցված և ձեռք բերեցին նոր երանգներ: Այդ փոփոխություններն արտահայտվեցին առաջին հերթին նոր բաժինների հիմնադրմամբ՝ Հին Արևելքի (բաժնի վարիչ՝ Ն. Հարությունյան), Կովկա-

սագիտության և բյուզանդագիտության (բաժնի վարիչ՝ Պ. Մուրադյան) և Արևելյան աղբյուրների (բաժնի վարիչ՝ Ա. Տեր-Ղևոնդյան): Այնուհետև Հին Արևելքի բաժինը ղեկավարեց Ա. Քոսյանը, Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժինը՝ Ա. Բոզոյանը, ապա Պ. Չորանյանը ու հետո Ա. Հակոբյանը, իսկ Արևելյան աղբյուրների բաժինը՝ Ա. Փափազյանը:

Այսպիսով՝ ինստիտուտում գործող գիտական բաժինների թիվը հասավ յոթի, իսկ արևելագիտական թեմատիկան ընդգրկեց հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Սկսեցին հրատարակվել գիտական նոր մատենաշարեր, որոնց շրջանակներում իրենց աշխատություններն էին տպագրում նորաստեղծ բաժինների աշխատակիցները: Այդ նոր մատենաշարերն էին «Հին Արևելքը», «Կովկաս և Բյուզանդիա» ու «Արևելյան աղբյուրագիտությունը»:

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ղեկավարության շրջանում ընդլայնվեցին Արևելագիտության ինստիտուտի գիտական կապերն արտերկրի արևելագիտական կենտրոնների հետ: Մասնավորապես, կարևոր նշանակություն ստացավ ասպիրանտների պատրաստումը Խորհրդային Միության խոշորագույն արևելագիտական կենտրոններում: Ստանալով Մոսկվայում և Լենինգրադում խորը գիտելիքներ արևելագիտության այն ոլորտներում, որոնք դեռևս թույլ էին զարգացած Հայաստանում, նրանք, վերադառնալով հայրենիք, կարևոր դեր կատարեցին ինստիտուտի գիտական կյանքում: Նրանց թվին էին պատկանում հետագայում ճանաչում ստացած և այսօր էլ ինստիտուտում աշխատող այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են՝ Հարություն Ժամկոչյանը, Մարգարիտա Խաչիկյանը, Արմանուշ Կոզմոյանը, Արամ Քոսյանը, Ալեքսան Հակոբյանը, Անուշ Հովհաննիսյանը: Երիտասարդների նկատմամբ ինստիտուտի ղեկավարության ուշադրության մասին է վկայում նաև այն փաստը, որ հիմք դրվեց երիտասարդ արևելագետների տարեկան գիտաժողովներին, որոնք անց էին կացվում գեղատեսիլ Աղվերանում: Տողերիս հեղինակներից մեկը բազմիցս մասնակցել է այդ գիտաժողովներին և կարող է վկայել, որքան օգտակար էին դրանք գիտության բնագավառում առաջին քայլերն անող երիտասարդի համար:

1980-ականներին Արևելագիտության ինստիտուտը հանդես էր գալիս որպես հանրապետության և ԽՍՀՄ-ի հումանիտար հետազոտությունների ոլորտի կարևոր գիտական կենտրոններից մեկը, իսկ նրա առաջատար աշխատակիցները վայելում էին մեծ հեղինակություն գիտության ու հասարակական կյանքի ոլորտներում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկում: Պատահական չէր, որ ինստիտուտի մի շարք աշխատակիցներ ակտիվորեն ներգրավվեցին 80-ականների վերջին երկրում ծավալված դարաբաղյան շարժման մեջ, իսկ նրանցից Ա. Հակոբյանը ընտրվեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամ: Կարելի է նշել նաև Ն. Հովհաննիսյանի անունը, ով լինելով ճանաչված արաբագետ, իր ուրույն դերակատարումն ուներ Մերձավոր Արևելքում Խորհրդային Միության կողմից իրականացվող դիվանագիտության ոլորտում:

Արևելագիտության ինստիտուտի մեծ հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ 1970–1980-ական թվականներին այստեղ կազմակերպվեցին մի շարք խոշոր համամիութենական ու միջազգային գիտաժողովներ: Այդ գիտաժողովները կարևոր ներդրում էին գիտական կյանքում: Միաժամանակ դրանց ընթացքում սկիզբ էր դրվում գիտական համագործակցություն ինստիտուտի աշխատակիցների և արտասահմանցի մասնագետների միջև, որը շատ դեպքերում շարունակվում է նաև այսօր:

1990-ական թվականների առաջին կեսը ծանր շրջան էր ինստիտուտի կյանքում: Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ հրաժեշտ տվեցին գիտությանը և որոշեցին իրենց գիտելիքները, փորձը և ունակությունները ներդնել պրակտիկ գործունեության ոլորտում: Նրանք աշխատանքի անցան նորանկախ Հայաստանի պետական կառավարման մարմիններում, ինչպես նաև համալրեցին ձևավորվող դիվանագիտական կորպուսը: Կային նաև այնպիսիները, որոնք, չդիմանալով առօրյա կյանքի ծանր պայմաններին, արտագաղթեցին: Որպես հետևանք՝ զգալիորեն պակասեց աշխատակիցների թիվը, թուլացավ գիտական կյանքի զարկերակը:

1995 թ. ինստիտուտի տնօրեն դարձավ արաբագետ, միջազգայնագետ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը: Նա աշխատում էր ինստիտուտում 1961 թ., եղել էր Արաբական երկրների բաժնի հիմնադիր վարիչը և ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն: Նրա ակտիվ ջանքերի շնորհիվ էր, որ հաջողվեց արագ հաղթահարել 90-ականների առաջին կեսի ճգնաժամը: Նրան մեծապես օգնում էին հաջորդաբար գիտական գծով փոխտնօրենի պաշտոնը զբաղեցրած Ա. Քոսյանը և Պ. Չոբանյանը:

Ինստիտուտը նորից սկսեց համալրվել երիտասարդներով, աշխուժացավ գիտական կյանքը, շարունակվեցին երիտասարդ արևելագետների գիտաժողովները, տեղի ունեցան միջազգային գիտաժողովներ: Կարելի է հիշատակել, օրինակ, 2006 թ. Կահիրեում ինստիտուտի կողմից կազմակերպած համատեղ հայ-եգիպտական խոշոր գիտաժողովը, որը նվիրված էր հայ-արաբական փոխառնչությունների պատմության ուսումնասիրմանը: Կարևոր իրադարձություն էր «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի վերահրատարակումը:

2002 թ. ՀՀ կառավարության որոշմամբ Արևելագիտության ինստիտուտում հիմնադրվեց նոր՝ Արևելյան Ասիայի բաժինը: Նրա հիմնադրումը վկայությունն էր այն իրողության, որ ընդլայնվում է հայոց արևելագիտության կիրառական նշանակությունը և այսուհետ նա իր հետազոտությունների շրջանակի մեջ ներառելու է աշխարհագրական նոր տարածաշրջաններ, առաջին հերթին այնպիսի կարևոր երկրներ, ինչպիսիք են՝ Չինաստանը, Ճապոնիան և Հնդկաստանը:

2006 թ. Արևելագիտության ինստիտուտի տնօրենն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը՝ սույն հոդվածի հեղինակներից մեկը, 2013 թ. գիտական գծով նրա տեղակալն է սույն հոդվածի մյուս համահեղինակը՝ պ. գ. թ., խեթագետ Ռոբերտ Ղազարյանը:

Այժմ Արևելագիտության ինստիտուտն ուսումնասիրում է Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի, Արևելյան Ասիայի երկրների ու ժողովուրդների պատմությունը, սոցիալ-քաղաքական, միջազգային և տարածաշրջա-

նային հարաբերությունները, մշակույթը, կրոնը, ազգային փոքրամասնությունների ու էթնիկական խմբերի խնդիրները և այլն՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Աշխարհագրական առումով նման ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Մերձավոր ու Միջին Արևելքը և Կովկասը Հայաստանի անմիջական հարևան տարածաշրջաններն են, Հայաստանի հին ու նոր պատմությունը սերտորեն միահյուսված է ասորեստանցիների, բաբելոնցիների, խեթերի, պարսիկների, բյուզանդացիների, վրացիների, աղվանների, արաբների, քրդերի, թուրքերի և այլ ժողովուրդների պատմությանը: Բացի այդ, արաբական երկրներում, Իրանում, Թուրքիայում, Վրաստանում և Հյուսիսային Կովկասում գոյություն ունեն հայ համայնքներ:

Ինստիտուտն ունի գիտահետազոտական հետևյալ բաժինները՝ Հին Արևելքի, Քրիստոնյա Արևելքի, Թուրքիայի, Իրանի, Արաբական երկրների, Արևելյան Ասիայի երկրների, Մերձավոր Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրության բաժինը և Քրդագիտական ուսումնասիրությունների խումբը:

Հին Արևելքի բաժնում (2011 թ. բաժինը ղեկավարում է պ. գ. դ. Ա. Քոսյանը) ուսումնասիրում են Միջագետքի, Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի պետությունների պատմությունը, էթնիկական, սոցիալ-տնտեսական, լեզվամշակութային, ինչպես նաև հելլենիզմի հարցերը: Զգալի աշխատանք է կատարվել հատկապես սեպագիր աղբյուրների վերծանման, ուսումնասիրության և մեկնաբանման ոլորտում: Այդ բնագավառում ուշադրության է արժանի «Դիվան ուրարտական սեպագիր արձանագրությունների» (Ն. Հարությունյան), «Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը» (Ա. Քոսյան), «Խուրիերեն և ուրարտերեն լեզուներ» (Մ. Խաչիկյան), «Սեմական լեզուները և հայերենը» (Ն. Մկրտչյան), «Եվրոպական հոները և Մերձավոր Արևելքը» (ռուսերեն) (Ռ. Մանասերյան) աշխատությունները և այլն:

Քրիստոնյա Արևելքի բաժնի ուշադրության կենտրոնում է արևելյան քրիստոնյա համայնքների, Վրաստանի միջնադարյան և նոր պատմության, հայ-վրացական և հայ-բյուզանդական հարաբերությունների, Աղվանքի պատմության, կովկասյան էթնոմշակութային աշխարհի, ինչպես նաև արևելյան եկեղեցիների ու միջեկեղեցական հարաբերությունների զանազան հարցերի ուսումնասիրությունը: Այժմ բաժնի աշխատանքները ղեկավարում է պ. գ. թ. Ա. Հակոբյանը: Այս ոլորտում կարևորվում է «Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը» աշխատությունը (Պ. Մուրադյան), «Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30–70-ական թթ.» (Ա. Բոզոյան), «Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին» (Պ. Չոբանյան) աշխատությունները:

Թուրքիայի բաժնում ուսումնասիրվել են Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության քաղաքական պատմությունը, ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավական վիճակը,Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը, Մեծ տերությունների քաղաքականությունը, ժամանակակից Թուրքիայի զարգացման առանձնահատկություններ-

ը, օսմանիզմի, պանթուրքիզմի, պանիսլամիզմի, քեմալիզմի, նեոօսմանիզմի և նեոպանթուրքիզմի հարցերը: Բաժնի աշխատանքները ղեկավարում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռ. Սաֆրաստյանը:

Թուրքագիտության և օսմանագիտության ոլորտում հիշատակման են արժանի հետևյալ աշխատությունները՝ □Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում□ (Ե. Սարգսյան), «Օսմանյան կայսրության բուրժուազիան» (Հ. Ինճիկյան), «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919–1921 թթ.» (Ռ. Սահակյան), «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում (Հ. Ստեփանյան) և այլն:

Առանձնահատուկ տեղ է գրավել թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ծրագրի ուսումնասիրությունը: Այս թեմային վերաբերող աշխատություններից կարելի է առանձնացնել Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը քննության ենթարկող մենագրությունը (Ռ. Սաֆրաստյան), ինչպես նաև «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» (Ա. Փափազյան) աշխատությունը:

Ինստիտուտի իրանագետների հիմնական ուշադրությունը սևեռված է եղել հետևյալ խնդիրների վրա. Իրանի հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության հարցեր, միջազգային հարաբերություններ, ներքին ու արտաքին քաղաքականություն, գաղափարախոսական ուղղություններ, հասարակական-քաղաքական հոսանքներ, կրոն, նավթային պրոբլեմ, իսլամական հեղափոխություն, ագրարային հարաբերություններ, ազգային հարց, տնտեսական խնդիրներ, մշակութային հարցեր, հայ-իրանական պատմական-մշակութային կապեր, Իրանում հին ու նոր հայկական գաղութների և գաղթօջախների պատմություն, Իրանի առանձին ժողովուրդների ու ցեղերի էթնիկական զարգացման հարցեր, աղբյուրագիտական բնույթի ուսումնասիրություններ, իրանական ձեռագրերի ուսումնասիրություն ու հրատարակում և այլն: Իրանագետների գիտական գործունեության մեջ զգալի տեղ է գրավել նաև Իրանի միջնադարյան գրականության և լեզվի ուսումնասիրության պրոբլեմը, մասնավորապես, էթնոլեզվամշակութային յուրահատկությունների, պարսկական դասական և ժամանակակից գրականության տարաբնույթ հարցերը:

Իրանի բաժինն իր ուսումնասիրությունների առարկա է դարձրել նաև քուրդ ժողովրդի պատմության մի շարք խնդիրներ: Իրանի բաժնի ջանքերով լույս ընծայվեց Վ. Բայբուրդյանի «Իրանի պատմություն՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» մեծածավալ աշխատությունը, որն առաջին փորձն է Հայաստանի դարավոր հարևանի ամբողջական պատմությունն ուսումնասիրելու և հայերեն լեզվով այն գիտական հասարակայնությանը մատուցելու ուղղությամբ: Հիշատակման է արժանի նաև Ա. Կոզմոյանի մենագրությունը՝ նվիրված հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկային:

1998 թ. Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժինը ղեկավարում է պ. գ. դ. Վ. Բայբուրդյանը: Վերջերս լույս տեսավ Արևելագիտության

ինստիտուտի՝ իրանագիտության ոլորտին նվիրված հրատարակությունների մատենագրությունը :

Արաբական երկրների բաժնում հետազոտվում են Արաբական Արևելքի երկրների (Եգիպտոս, Սիրիա, Իրաք, Լիբանան և այլն) միջնադարյան, նոր և նորագույն պատմության, ազգային-ազատագրական շարժումների, գաղութային տիրապետության վերացման և արաբական երկրների անկախության նվաճման, միջազգային ու միջարաբական հարաբերությունների, իսլամի և գաղափարախոսության տարատեսակ խնդիրներ: Բաժնի վարիչի պաշտոնակատար է նշանակվել պ. գ. թ. Լ. Հարությունյանը:

Ինստիտուտի արաբագիտության բնագավառում գերակայող է եղել արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների (Ն. Հովհաննիսյանի աշխատությունները), դրանց սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացման ուղիների (Ե. Նաջարյանի՝ արաբական ազգային-մշակութային զարթոնքին նվիրված մենագրությունը), միջարաբական, ինչպես նաև հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերությունների (Ա. Տեր-Ղևոնդյանի՝ «Հայաստանը VI–VIII դարերում» աշխատությունը), իսլամի դերի և այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը: Ուշադրության է արժանի Ն. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատորյակը, որն իր մեջ ներառում է Մաղրիբի և Մաշրիքի բոլոր արաբական երկրների պատմությունը:

Արևելյան Ասիայի երկրների բաժնում ուսումնասիրվում են Չինաստանի, Ճապոնիայի արդի պատմության խնդիրները, արտաքին քաղաքական միտումները, այդ երկրների տեղն ու դերը տարածաշրջանային և միջազգային գործընթացներում, ինչպես նաև նշյալ երկրների վարած քաղաքականությունը Հարավային Կովկասում ու Մերձավոր Արևելքում: Բաժնի աշխատանքները ղեկավարում է պ. գ. թ. Ա. Բայբուրդյանը: Ակտիվ կապեր են հաստատվել հատկապես Չինաստանի մի շարք գիտական կենտրոնների հետ:

Քրդագիտական ուսումնասիրությունների խմբի թեմատիկայում մեծ տեղ է գրավում բանասիրության՝ լեզվի, գրականության և բանահյուսության ուսումնասիրությունը: Զուգահեռաբար հետազոտվում են քուրդ ժողովրդի պատմության հարցերը, մասնավորապես, քրդերը Հայաստանում և նրանց հոգևոր-մշակութային զարթոնքը, հայ-քրդական հարաբերությունները, ինչպես նաև քրդական խնդիրն այսօր (Իրաք, Թուրքիա, Իրան):

Այս հարցերն իրենց արտացոլումն են գտել «Քրդական ժողովրդական հեքիաթների» 4 հատորներում (Հ. Ջնդի), «Հայ մտավորականության ավանդը քրդական մշակույթի և պատմության ուսումնասիրության գործում (1850–1990 թթ.)» (Կ. Չաչանի) աշխատությունում: Հյուսիսային Իրաքում Քրդական ինքնավարության ստեղծման պատմությանն է նվիրված Շ. Մ-հոյանի աշխատությունները: Կարևոր են նաև Մ. Խամոյանի հրատարակած քրդերեն լեզվի քերականությանը վերաբերող աշխատությունները, ինչպես նաև Ա. Փոլադյանի հրատարակած «Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում» մենագրությունը: Մեծ ուշադ-

ռություն է դարձվել նաև ինստիտուտում քուրդ մասնագետների պատրաստման խնդրին:

Պահպանելով դասական արևելագիտության հիմնական ուղղությունների (պատմություն, աղբյուրագիտություն, բանասիրություն, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, կրոն և այլն) ուսումնասիրությունը՝ ինստիտուտում մեծ տեղ է հատկացվում նաև արևելյան հասարակության կառուցվածքային-համակարգային ուսումնասիրությանը, քաղաքակրթությունների փոխազդեցության օրինաչափությունների բացահայտմանը, ինչպես նաև արաբական պետությունների, Թուրքիայի, Իրանի, Վրաստանի և այլ երկրների հետ Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունների, Հայաստանի, որպես անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոնի, նրա տեղի և դերի գիտական հիմնախնդիրների համակողմանի հետազոտությանը: Այս ոլորտն իր բնույթով ռազմավարական նշանակություն ունի և խիստ կարևոր է Հայաստանի արտաքին քաղաքականության ու ազգային անվտանգության հիմնախնդիրների մշակման առումով:

Վերոնշյալ հարցերի ուսումնասիրման նպատակով Արևելագիտության ինստիտուտում վերջերս բացվեց նաև Մերձավոր Արևելքի միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրության բաժինը (բաժնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ն. Հովհաննիսյան), որն ուսումնասիրում է Մերձավոր և Միջին Արևելքում ու Հարավային Կովկասում միջազգային և տարածաշրջանային հարաբերությունները, մեծ տերությունների քաղաքականությունը, Հայաստանը որպես տարածաշրջանային գործոն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները հարակից երկրների հետ:

Վերոհիշյալ խնդիրների հետ միասին ինստիտուտում աշխատանք է կատարվել արևելյան աղբյուրների ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես, արաբական, թուրքական, պարսկական և վրացական աղբյուրները հայերի և Հայաստանի մասին և հայկական աղբյուրները արևելյան ժողովուրդների մասին: Հրատարակվել են «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» քառահատորյակը (Ա. Սաֆրաստյան), «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրներերի մասին»(Հ. Նալբանդյան) աշխատությունը, ինչպես նաև «Ալբանիա-Աղվանքը հույն-լատինական և հինհայկական աղբյուրներում» (Ա. Հակոբյան) մենագրությունն ու սամարական ձեռագրերի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները (Հ. Ժամկոչյան):

Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում որոշակի տեղ ունի նաև մերձավորարևելյան երկրների ու Կովկասի հայ համայնքների պատմության և սոցիալ-տնտեսական վիճակի, այդ երկրներում նրանց քաղաքական ու տնտեսական դերի, հարևան երկրների հետ հայ ժողովրդի պատմամշակութային դարավոր հարաբերությունների լուսաբանությունը:

Ինստիտուտի կարևորագույն ձեռքբերումներից են նաև տարաբնույթ ժողովածուների՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (լույս է տեսել 28 հատոր), «Թյուրքագիտական և օսմանագիտական

հետազոտություններ» (լույս է տեսել 8 հատոր), «Մերձավոր Արևելք» (լույս է տեսել 8 հատոր), «Կովկաս և Բյուզանդիա» (լույս է տեսել 6 հատոր), «Հին Արևելք» (լույս է տեսել 5 հատոր), «Արևելաասիական ուսումնասիրություններ»(լույս է տեսել 2 հատոր), «Ժամանակակից Եվրասիա» (լույս է տեսել 2 հատոր) հրատարակումը:

Ինստիտուտը պատրաստում է գիտական կադրեր մագիստրատուրայի, ասպիրանտուրայի միջոցով: Ինստիտուտում գործում է գիտության թեկնածուի ու դոկտորի գիտական աստիճան շնորհող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհուրդ՝ համաշխարհային պատմություն, աղբյուրագիտություն և պատմագրություն մասնագիտությունների գծով: Արտասահմանյան շատ գիտնականներ իրենց համար պատիվ են համարում իրենց ատենախոսությունները պաշտպանել Արևելագիտության ինստիտուտում գործող վերոնշյալ մասնագիտական խորհրդում: Մեր գիտական խորհրդում են պաշտպանել և գիտական աստիճանի են արժանացել արտասահմանյան մի շարք գիտնականներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Եգիպտոսից, Իսրայելից, Իտալիայից, Իրանից, Լիբանանից և Սիրիայից:

Ինստիտուտը, պահպանելով համագործակցության նախկին ձևերը՝ մասնագետների փոխադարձ այցելություններ, գիտաժողովներին մասնակցություն, գրքափոխանակություն և այլն, վերջին տարիներին նախապատվությունը տալիս է համագործակցության հաստատմանը պայմանագրային հիմքի վրա: Արևելագիտության ինստիտուտը համագործակցության պայմանագրեր է ստորագրել Դամասկոսի արաբական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի (2000 թ.), Չանդիգարհի (Հնդկաստան) գիտահետազոտական կենտրոնի (2003 թ.), Դելիի քաղաքական հետազոտությունների ինստիտուտի (2003 թ.), Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի (2003 թ.), Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտի (2011 թ.), ՌԴ արևելագիտության ինստիտուտի (2011 թ.), Թրակիայի Դեմոկրիտի համալսարանի (Հունաստան) (2011 թ.), Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ակադեմիայի (2011 թ.), ՌԴ ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (2012 թ.), Մ. Աուեզովի անվան Հարավղազախստանյան պետական համալսարանի (Ղազախստան) (2012 թ.), Հայկական ազգային ինստիտուտի (ԱՄՆ) (2012 թ.) հետ: 2013 թ. փետրվարի 24-ին կնքվել է համաձայնագիր գիտական համագործակցության մասին Արևելագիտության ինստիտուտի և Եգիպտոսի Շամս համալսարանի իգական ֆակուլտետի պատմության բաժնի միջև: Ինստիտուտը համագործակցում է նաև այլ գիտական կենտրոնների հետ:

Ինստիտուտի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են միջազգային գիտաժողովների (Ամստերդամ, Լեյդեն, Հայդելբերգ, Ֆրանկֆուրտ, Փարիզ, Լոնդոն, Նյու Յորք, Բեռլին, Մյունստեր, Թեհրան, Բեյրութ, Բաղդադ, Կահիրե, Բերքլի, Լոս Անջելես, Վաշինգտոն և այլն), այդ թվում և արևելագիտական համաշխարհային կոնգրեսներին (Մոսկվա, Փարիզ, Անկարա, Համբուրգ, Մոնրեալ և այլն): Վերջին տարիներին ինստիտուտի նախաձեռնությամբ մի շարք միջազգային գիտաժողովներ են հրավիրվել

Երևանում: Կարելի է նշել Արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին (2008 թ.) նվիրված, «Հայաստանի և Աղվանքի թագավորությունները և Բյուզանդական կայսրությունը Ժ դարում» հայ-ֆրանսիական (2010 թ.), «Ալբանիա-Աղուանք-Առան. էթնո-քաղաքական պատմության հիմնախնդիրներ»(2012 թ.) գիտաժողովները և այլն:

2000 թ. Մոնրեալում ընթացող արևելագետների համաշխարհային 36-րդ կոնգրեսում ինստիտուտը միաձայն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո:

Ինստիտուտում գործում է հարուստ արևելագիտական մասնագիտացված գրադարան, որը պարունակում է հայերեն, ռուսերեն, վրացերեն, արաբերեն, թուրքերեն, օսմաներեն, պարսկերեն, եբրայերեն, քրդերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով գիտական գրականություն:

Ինստիտուտի գիտաշխատողները լայնորեն համագործակցում են ՀՀ համապատասխան պետական կառույցների հետ՝ նպաստելով մեր երկրի արտաքին քաղաքականությանը վերաբերող հիմնահարցերի մշակմանը: Մասնակցում են նաև ՀՀ հասարակական կյանքին, հաճախակի հանդես գալով ԶԼՄ-ներով՝ արդիական կարևոր հնչեղություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտական մեկնաբանություններով:

Արևելագիտության ինստիտուտի մի շարք աշխատակիցներ (Գ. Սարգսյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Ստեփանյան) պարգևատրվել են պետական և ՀՀ Նախագահի մրցանակներով:

Ինստիտուտի գիտական գործունեությանը նպաստել է արտասահմանյան արևելագիտական կենտրոնների հետ սերտ համագործակցությունը: Ինստիտուտի մասնագետներն իրենց գործունեությունն են ծավալել նաև համաշխարհային նշանակություն ունեցող այնպիսի կարևոր ծրագրերում, ինչպիսիք են՝ A. Humboldt Foundation, US Fulbright Program, DAAD, KAAD և այլն:

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

РУБЕН САФРАСТЯН, РОБЕРТ КАЗАРЯН

Резюме

В 1958 году в составе АН АрмССР был создан Сектор востоковедения, который в 1971 году был переформирован в Институт востоковедения АН Армении. Институтом руководили именитые ученые – академик Мкртич Нерсисян (заведующий Сектором в 1958–1959 гг.), проф., д. и. н. Оганнес Инджикян (заведующий Сектором в 1959–1971 гг.), академик Гагик Саркисян (1971–1994 гг.), чл.-корр. Николай Оганесян (1995–2006 гг.). С 2006 г. его директором является чл.-корр. Рубен Сафрастян.

Основные научные направления Института: история, культура и современные региональные проблемы Ближнего и Среднего Востока, а также Восточной Азии; освещение проблем истории, внешней и внутренней политики, социально-экономического положения, идеологических течений, политика Геноцида и других ключевых вопросов Османской империи и Турецкой республики; изучение национально-освободительных движений арабских стран, путей их социально-политического развития, отношений между арабскими странами, армяно-арабских историко-политических отношений, роли ислама, а также истории армянских общин в арабских странах; изучение истории, внутренней и внешней политики, филологии Ирана и армяно-иранских историко-культурных отношений; изучение истории, фольклора курдского народа, а также армяно-курдских взаимоотношений; изучение узловых вопросов истории Христианского Востока и Кавказа, истории Кавказской Албании, армяно-византийских политико-конфессиональных отношений и армяно-грузинских взаимоотношений; изучение базисных вопросов истории и культуры клинописных и эллинистических цивилизаций; исследование восточных источников и их перевод на армянский язык.

Институт востоковедения НАН РА подписал договоры с рядом ведущих зарубежных университетов и научных центров, в том числе сирийскими, китайскими, индийскими, казахстанскими, российскими и западными. Периодически проводятся научные конференции.

Институт на протяжении ряда лет издает сборники научных трудов: «Страны и народы Ближнего и Среднего Востока», «Тюркологические и османистические исследования», «Ближний Восток», «Кавказ и Византия», «Древний Восток», «Восточно-азиатские исследования», «Современная Евразия».

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

RUBEN SAFRASTYAN, ROBERT GHAZARYAN

S u m m a r y

The sector of Oriental Studies was established in the Academy of Sciences of ArmSSR in 1958. In 1971 it was transformed into the Institute of Oriental Studies of the Academy of Sciences of Armenia. The Institute of Oriental Studies was directed by renowned scientists, namely academician Mkrtich Nersisyan (Head of Sector in 1958–1959), Prof., Dr. Hovhannes Inchikyan (Head of Sector in 1959–1971), academician Gagik Sargsyan (Director of the Institute, 1971–1994), Corresponding Member of NAS RA Nikolay Hovhannisyan (Director of the Institute, 1995–2006), Corresponding Member of NAS RA Ruben Safrastyan (Director of the Institute, 2006 – up to present).

The main scientific directions of the Institute are: History, culture of the Middle East and Eastern Asia and contemporary regional problems; studies on history, internal and foreign policy, socio-economic situation, ideological streams, policy of Genocide and other principal issues of the Ottoman Empire and Turkish Republic; studies on history of national liberation movements in

Arabic countries, the trends of their socio-political and spiritual-cultural development, inter-Arabic, as well as Armenian-Arabic historical and political relations, the role of Islam and research of history of Armenian communities in Arabic countries; studies on history of Iran, internal and foreign policy, Iranian philology and Armenian-Iranian historical and cultural relations; studies on the Kurds, their history, folklore, Armenian-Kurdish relations; the main problems of the history of Christian Orient, Caucasian Albania, Armenian-Byzantine political-confessional relations and Armenian-Georgian relations; studies on the main issues of history and culture of cuneiform and Hellenistic civilizations; study of Eastern sources, documents and their translation into Armenian.

The Institute of Oriental Studies of NAS RA has signed agreements with several well-known foreign universities and organizations, among which are Syrian, Chinese, Indian, Kazakh, Russian and Western universities and scientific centers. The Institute regularly undertakes scientific conferences.

In the course of years the Institute publishes various collections of scientific articles, namely “Countries and Peoples of the Near and Middle East”, “Turkic and Ottoman Studies”, “Middle East”, “Caucasia and Byzantine”, “Ancient Orient”, “Eastern Asian Studies”, “Contemporary Eurasia”.